Թվային ստորագրության վավերացումը ԱՄՄՊ համակարգի միջոցով

Ուղեցույց

Պատրաստել է՝	ԲԻՎԱՔ Հայաստանը
Ներկայացվել է՝	ՀԱԱԲ-ին
Ներկայացման ամսաթիվ՝	24.06.2020
Տարբերակ՝	1.0

Ներածություն

ԱՄՄՊ համակարգի կողմից գեներացված փաստաթղթերի իսկությունը երաշխավորելու նպատակով համակարգում ներդրված է թվային ստորագրություն:

Սույն ուղեցույցը ներկայացնում է ԱՄՄՊ համակարգում հատուկ գործառույթի միջոցով փաստաթղթում առկա թվային ստորագրության վավերությունն ստուգելու գործընթացը:

Վավերացման գործընթաց

Թվային ստորագրության վավերությունը ստուգելու համար անհրաժեշտ քայլերն են՝

1. **Մուտք գործել https://aswa.am/**

2. **Սեղմել “Տեղեկատվության առցանց հարցում” հրամանին**

3. **Սեղմել «Թվային ստորագրություն» հրամանին**

4. **Վավերացնել**



5. **Սեղմել “Վերբեռնել ֆայլ” հրամանին**



6. **Ընտրել ֆայլը վավերացնելու համար**

Ֆայլը վերբեռնելուց հետո էկրանին կտեսնեք հաղորդագրության հետևյալ տարբերակները՝

- Ստորագրության կարգավիճակ՝ ստեղծված ԱՄՄՊ համակարգի կողմից: Բնօրինակի իսկությունը՝ հաստատված:
  Սույն փաստաթուղթը կազմված և փոխանցված է ԱՄՄՊ համակարգի միջոցով:

- Ստորագրության կարգավիճակ՝ բացակայում է:
  Սույն փաստաթուղթը ստորագրված չէ:

- Ստորագրության կարգավիճակ՝ ԱՄՄՊ համակարգի կողմից ստեղծված: Բնօրինակի իսկությունը՝ չհաստատված/փոփոխված:
  Սույն փաստաթղթի տվյալները փոփոխված/անվավեր են:

- Ստորագրության կարգավիճակ՝ ստեղծված ոչ ԱՄՄՊ համակարգի կողմից:
  Անհայտ թվային ստորագրություն:

Փաստաթղթերի ցանկ

Թվային ստորագրությունը ներդրված է ԱՄՄՊ-ի կողմից ստեղծված հետևյալ փաստաթղթերի համար.

- ԱՊՊԱ վկայագրի
- Որոշում-ծանուցում ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ
- Հիշեցում-ծանուցում - ապահովագրավճարի հերթական մասի վճարման և դրա չվճարման հետևանքների վերաբերյալ: